

**ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ԱՌԱՋԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

(Զեկույց Իրերուամերիկյան սահմանադրական դատարանների կոնֆերանսում,
Մերիլա, Մեքսիկա, 15-17 ապրիլի 2009թ.)

Գ. Հարությունյան - ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ

Հարգարժան գործընկերներ,

Սահմանադրական արդարադատության մարմինների համաշխարհային առաջին կոնֆերանսից հետո առաջին անգամ իրավիրվում է Կոնֆերանսի բյուրոյի նիստ, որն առիթ դվեց նաեւ մասնակցելու Իրերուամերիկյան սահմանադրական դատարանների կոնֆերանսի աշխատանքներին: Ես շնորհակալություն եմ հայփնում կազմակերպիչներին մասնակցության իրավերի եւ ելույթով հանդես գալու հնարավորության համար:

Ցանկանում եմ նախ ներկայացնել մի քանի ընդհանուր նկարառումներ: Ներկայումս աշխարհի 48 երկրներում սահմանադրական արդարադատությունն իրականացվում է ամերիկյան մոդելով՝ ընդհանուր իրավասության դատարանների կողմից, իսկ շուրջ 110 երկրներում եվրոպական մոդելով՝ մասնագիրացված սահմանադրական դատարանների ու խորհուրդների կողմից:

Եվրոպական մոդելի հիմնական առանձնահարկությունն այն չէ, որ սպետճվում են հարուկ մասնագիրացված սահմանադրական դատարաններ ու խորհուրդներ: Էական է եւ այն, որ փարբեր են վերահսկողության մեթոդներն ու բնույթը: Առանցքայինն այն է, որ եթե ամերիկյան համակարգին բնորոշ է հիմնականում հեփակա կոնկրետ վերահսկողությունը, ապա եվրոպական համակարգում, դրա հետ մեկտեղ, առկա են նախնական, հեփակա, վերացական, պարփաղիր, ֆակուլտատիվ, ըստ ձեւի եւ ըստ բովանդակության վերահսկողության ձեւերը:

Լուրջ փարբերություններ կան նաեւ սահմանադրական վերահսկողության սկզբունքների առումով: Եվրոպական սահմանադրական վերահսկողության համակարգը գործում է ոչ միայն մրցակցության, կողմերի իրավահավասարության, իրապարակայնության, այլեւ գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի հիման վրա: Այս համակարգում Սահմանադրության գերակայության երաշխավորումն առաջին հերթին ապահովում է հենց Սահմանադրությամբ: **Սահմանադրությունը պետք է ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար**

համակարգ: Եվրոպական շաբ երկրներում Սահմանադրությունը նույնպես դառնում է սահմանադրական վերահսկողության օրենքի:

Հաշվի առնելով ԱՄՆ-ի Գերագույն դատարանի կողմից իրավական ակդի սահմանադրականության կապակցությամբ առաջին որոշման ընդունումը («Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործով) եւ վերջին հարյուրամյակների ընթացքում նոր մոդեռնումները, կարելի է պայմանականորեն առանձնացնել սահմանադրական արդարադապության համակարգերի ձեւավորման եւ զարգացման հերթեյալ փուլերը.

1. 1803-1920թթ.,
2. 1920-1940թթ.,
3. 1945-1990թթ.,
4. 1990 թվականից հետո:

Եթե առաջին փուլը խորհրդանշվում է նշված գործով ընդունված որոշմամբ, երբ սկիզբ դրվեց սահմանադրական վերահսկողության ամերիկյան համակարգին, ապա երկրորդ փուլը համընկնում է դատական սահմանադրական վերահսկողության մասնագիրացված առաջին ինսպիրուտիվի սփեղծման հետ: Ավստրիայի 1920թ. Սահմանադրությունը նշանավորվում է Ավստրիայի սահմանադրական դատարանի սփեղծմամբ՝ օրենքի նկարմամբ սահմանադրական վերահսկողության բացառիկ իրավունքով (սկզբում, ճիշդ է, նախնական բնույթի): Դա դեղի ունեցալ հիմնականում ավստրիացի իրավաբան-դիսաբաններ Ադոլֆ Մերկլի եւ Շանս Չելզենի շնորհիվ:

Ավստրիայի օրինակով մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը դատական սահմանադրական վերահսկողություն ներդրվեց Զեխովովակիայում (1920թ.), Լիխովեյնշվեյնում (1925թ.), Շունասպանում (1927թ.), Խապանիայում (1931թ.), Իոլանդիայում (1937թ.), Եզիպետոսում (1941թ.): Սահմանադրական վերահսկողության ավելի լայնորեն ներդրման միջումն ընդհապվեց Երկրորդ համաշխարհային պատերազմով, եւ արդեն ձեւավորված ինսպիրուտները չկարողացան գործունեություն ծավալել (օրինակ, Ավստրիան սահմանադրական վերահսկողություն չի ունեցել 1933-1945թթ., Զեխովովակիան՝ 1938 թվականից):

Երրորդ փուլը հերթափերազմյան (1945-1990թթ.) փուլն է, երբ Եվրոպական պետություններում գրեթե միաժամանակ ձեւավորվեցին սահմանադրական դատարաններ, որոնց հիմնական խնդիրն օրենքների եւ այլ նորմատիվ ակդերի՝ Շիմնական օրենքին համապարասխանության ապահովումն էր:

Շաբ այլ պետություններ նույնպես սահմանադրական վերահսկողության հասկուլ համակարգ ներդրեցին անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. Բրազիլիան (Երկրորդ անգամ՝ 1946թ.), Բիրման (1947թ.), Իբրազիան (1948թ.),

Թախլանդը (1949թ.), Գերմանիան (1949թ.), Շնորհաստանը (1949թ.), Լյուքսեմբուրգը (1950թ.), Սիրիան (1950թ.), Ուրուգվայը (1952թ.), Ֆրանսիան (1958թ.) եւ այլն:

Վյո ժամանակահարվածում կոմունիստական վարչակարգ եւ միակուսակցական համակարգ ունեցող պետություններում դարպական սահմանադրական վերահսկողության ինսպիրուվածների ձեւավորումը համարվում էր բուրժուական շքեղություն: Ի հակադրություն դրա, շատ եվրոպական պետություններ (Ավստրիան, Գերմանիան, Խոպանիան, Իտալիան եւ այլն) առաջադրեցին այն հարցը, որ մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը պետք է դառնա սահմանադրական արդարադարպության առանցքային խնդիրը: Բնականաբար, հետպատերազմյան շրջանում ոչ միայն այդ երկրների սահմանադրական դարպարաններն սպացան նման լիազորություններ, այլ նաև քաղաքացիներն սպացան իրենց իրավունքներն ընդհուած մինչեւ սահմանադրական դարպարանում պաշտպանելու իրավունք:

Սահմանադրական արդարադարպության չորրորդ փուլը համընկնում է ժողովրդավարացման որակապես նոր գործընթացների, մեծաթիվ նորանկախ պետությունների ձեւավորման ժամանակահարվածի հետ: Տաշվի առնելով եվրոպական պետությունների կուրակած փորձը՝ երիտասարդ նորանկախ պետություններն իրենց պետական շինարարության եւ ժողովրդավարական ինսպիրուվածների զարգացման գործում առաջին եւ հիմնական քայլերից մեկը համարեցին նաև իշխանությունների դարանջարման սկզբունքի գործնական իրացումը եւ սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի սրբեղծումը: Դա նաև պայմանավորված էր Սահմանադրության պաշտպանության անհրաժեշտությամբ, որը գրեթե բոլոր պետություններում մշակվեց եւ ընդունվեց որոշակի դժվարություններով, այսպես կոչված՝ «մոդելային սկզբունքով», ինչպես նաև այն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնք կապված էին հասարակական զարգացումը ճգնաժամային կառավարման հարթությունից հասարակական եւ պետական կայունության ու դինամիկ զարգացման հարթություն փոխադրելու հետ:

Վերջին փուլերը նշանավորվում են նաև Եվրոպայի որոշ երկրներում քաղաքական փոփոխություններով, որոնք սահմանադրական վերահսկողությունը ներդրել են դիկտատորական անկումից հետո. Ռուսաստան (1968թ.), Խոպանիա (1978թ.), Պորտուգալիա (1976թ.): Վյո ժամանակահարվածում սահմանադրական վերահսկողություն ներդրվում է նաև այլ պետություններում. Կիպրոսում (1960թ.), Թուրքիայում (1961թ.), Ալժիրում (1963թ.), նախկին Հարավալավիայի Դաշնության հանրապետություններում (1963թ.) եւ այլուր:

80-ական թվականների քաղաքական եւ սոցիալական փոփոխությունների արդյունքում սահմանադրական վերահսկողությունն սկսել է ներդրվել նաև Կենդրոնական եւ Հարավային Ամերիկայի, ինչպես նաև Աֆրիկայի ու արարական մի շարք երկրներում:

Վերջին դասնամյակներում ավելի մեծ թվով պերություններ ընդունում են սահմանադրական արդարադապության և վրոպական մոդելը, ինչը պայմանավորված է հասարակական զարգացման կայունության երաշխիքների հուսալի համակարգի ձեւավորման անհրաժեշտությամբ:

Դայգնի է, որ սահմանադրական արդարադապության ամերիկյան մոդելին բնորոշ են հետևյալ հավկանիշները.

- համընդգրկուն բնույթը, համաձայն որի վերահսկողությունը ներառում է ոչ միայն օրենքները, այլ նաև բոլոր մակարդակների ցանկացած նորմատիվ ակտ,
- վերահսկողությունն իրականացվում է ապակենքրոնացված կերպով՝ ցանկացած դադարանի կողմից, ցանկացած կոնկրետ գործ քննության առնելիս, եթե օրենքը կամ նորմատիվ ակտն առնչվում է հայցվորի կոնկրետ շահերին,
- կրում է հարաբերական բնույթ, քանի որ դադարանի որոշումը պարսպադիր է միայն կողմերի համար եւ չի փարածվում իրավակիրառման ողջ դաշտի վրա,
- այն ունի կոնկրետ հետագա վերահսկողության բնույթ:

Ինչո՞ւ Եվրոպան 20-րդ դարում զընդունեց ամերիկյան մոդելը: Այս հարցին շափերն են փորձել պարասխանել: Մի դեպքում փորձել են պարասխանը փնտրել «օրենք» եւ «Սահմանադրություն» հասկացությունների բազմաբնույթ ընկալման հարթության վրա: Մեկ այլ դեպքում շեշտադրումը կարարվում է դադարական համակարգի եւ դադարավորների գործունեության առանձնահավկության վրա (հարուկ առանձնացնելով դադարանի անկախության ասդիճանը եւ օրենքի սահմանադրականության հարցի վերաբերյալ որոշում ընդունելու՝ դադարավորների կարողությունը): Երրորդ դեպքում առաջին պլան են մղվում փվյալ հասարակության առջեւ դրված խնդիրները եւ դրանց լուծմանը բնորոշ առանձնահավկությունները: Այսպես թե այնպես, ավելի քան մեկ դար ողջ աշխարհում դադարական սահմանադրական վերահսկողության գործառույթն իրականացրել են ընդհանուր իրավասության դադարանները: Սակայն 20-րդ դարի սկզբներին հասարակական կյանքում դեղի ունեցած բուռն փոփոխությունները, ընդ որում՝ իշխանությունների դարանշապման պայմաններում, մասնագետների առջեւ դրեցին մի շարք հիմնախնդիրներ.

1. հնարավոր դարձավ օրենքի միջոցով հասնել իշխանության մեծ կենքրոնացման, ընդհուպ՝ դրա ուղղությաման¹,

2. հասարակական իրավիճակի եւ դրան համապատասխան օրենսդրական դաշտի արագ փոփոխության պայմաններում կոնկրետ գործերով իրականացվող վերահսկու-

¹ Կարենոր է նաև այն հանգամանքը, որ մայրցամաքային իրավական համակարգում օրենքը բացառապես քաղաքական փոխհամաձայնության արդյունք է, եւ արդարադապական նախադեպը որպես իրավունքի աղբյուր վճռական դերակարգություն չունի:

դությունն ակնհայփորեն անբավարար էր Սահմանադրության գերակայությունն արդյունավելութեն ապահովելու համար,

3. իշխանությունների փարանջապման պայմաններում հասարակության ապակայունացման գլխավոր դեպոնապորտը դարձավ իշխանության փարբեր ճյուղերի պայքարը լիազորությունների համար:

Նշվածներից բացի, այլ էր նաև մոդելացման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ անձի շահերին առնչվող հարցի լուծումը, այլ նաև ողջ օրենսդրական համակարգի սահմանադրականության ապահովման միջոցով հասարակական կայունության եւ դինամիկ զարգացման հիմնախնդիրը (չպեսք է մոռանալ, որ վերջին երկու համաշխարհային պարերազմներն սկիզբ են առել Եվրոպայում):

Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում առաջնահերթ են համարվում հետևյալ երեք խնդիրները.

ա/ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովումը եւ դրա միջոցով իշխանության փարբեր ճյուղերի միջեւ սահմանադրականորեն ամրագրված գործառնական հավասարակշռության պահպանումը,

բ/ իշխանության փարբեր մարմինների միջեւ իրավասությունների կապակցությամբ վիճելի հարցերի լուծման հսկակ կանոնակարգումը,

գ/ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առավել ամբողջական եւ հուսալի համակարգի սպեղծումը:

Սահմանադրական արդարադարձության եվրոպական համակարգը կարող է լիարժեքորեն, արդյունավել և անկախ գործել որոշակի **անհրաժեշտ եւ բավարար նախադրյալների** առկայության դեպքում: Դրանց թվին կարելի է դասել.

- դարձական սահմանադրական վերահսկողության գործառնական, ինսպիրուցիոնալ, կազմակերպչական, նյութական և սոցիալական անկախությունը,
- հետևողականությունն իշխանությունների փարանջապման սկզբունքի սահմանադրական իրազործման ընթացքում,
- հիմնարար սահմանադրական սկզբունքների և պերական իշխանության իրականացման համապարասխան սահմանադրական մեխանիզմների համարժեքությունը և համադրելիությունը,
- սահմանադրական վերահսկողության օբյեկտների ճիշդ և հիմնավորված ընդունակությունը,
- սահմանադրական դարձական դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների օպրինական շրջանակի որոշումը,
- համակարգային մոդելացման դարձական իշխանության գործառնական լիարժեքության ապահովման ընթացքում,

- հսկակ օրենսդրական քաղաքականության առկայությունը և իրականացումը երկրում,

- ժողովրդավարական արժեքների ընկալման մակարդակը հասարակության մեջ:

Սահմանադրական արդարադափության պրակտիկան երիտասարդ ժողովրդավարության երկրներում վկայում է, որ սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների միջոցով Սահմանադրության գերակայության հուսափ երաշխավորման համար անհրաժեշտ է, որպեսզի սահմանադրական դադարանն օժգուած լինի իրավասությամբ.

ա) որոշելու իրավական ակտերի սահմանադրականությունը՝

- սահմանադրական փոփոխությունների,
- միջազգային պայմանագրերի,
- օրենքների,
- այլ նորմատիվ ակտերի.

բ) իրականացնելու կոնկրետ վերահսկողություն՝

- անհարական դիմումների հիման վրա,
- դադարանների դիմումների հիման վրա.

գ) պաշտոնապես մեկնաբանելու՝

- Սահմանադրությունը,
- օրենքները.

դ) լուծելու իրավական վեճերը՝

- իշխանության կենտրոնական մարմինների միջեւ,
- կենտրոնական եւ ռեգիոնալ ինսպիրուցիաների միջեւ,
- ռեգիոնալ ինսպիրուցիաների միջեւ,
- դադարանների ու այլ մարմինների միջեւ.

ե) ապահովելու ժողովրդավարական գործնականությունը՝

- կուսակցությունների գործունեության սահմանադրականության վերահսկում,
- հանրաքվեների սահմանադրականության վերահսկում,
- ընդունակությունների սահմանադրականության եւ օրինականության վերահսկում,
- պաշտոնանկության սահմանադրականության որոշում (Նախագահ, այլ պաշտոնադար անձինք),
- դադարանների, գեղական ինքնակառավարման մարմինների անկախության երաշխիքների ապահովում:

Այդ գործառույթներին համապատասխան ձեւավորվում է սահմանադրական դատարանների լիազորությունների եւ դատարան դիմող սուբյեկտների շրջանակը:

Եական են նաև դատարանների կազմավորման կառուցակարգային լուծումները: ՀՀ սահմանադրական դատարանն Ավագրիայի, Դանիայի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Իռլանդիայի, Շվեդիայի, Ռուսաստանի Դաշնության, Նորվեգիայի, Մալթայի, Թուրքիայի եւ մի շարք այլ երկրների՝ սահմանադրական արդարադարպություն իրականացնող մարմինների օրինակով օժբված է անկախության այնապիսի կարեւոր երաշխիքով, ինչպիսին անդամների մինչեւ յոթանասուն (սահմանադրական փոփոխություններով՝² 65) փարին լրանալն անփոփոխելիության սկզբունքով նշանակումն է²: Նման դրույթը գնալով ավելի ու ավելի է կարեւորվում սահմանադրական արդարադարպության միջազգային պրակտիկայում: Այդ համակարգին են կրկին վերադարձել Ռուսաստանի Դաշնությունում՝ ՍԴ մասին դաշնային օրենքում նախադրեսելով ՍԴ դատավորների անժամկետ պաշտոնավարում՝ մինչեւ 70 փարին լրանալը:

Անհրաժեշտ է, որպեսզի բավարար կենսունակությամբ օժբված լինեն նաև դատարանի անկախության մյուս բաղադրիչները: Նաշվի առնելով այս ոլորփում միջազգային զարգացումների հիմնական միտումները, կարելի է եզրակացնել, որ **արդյունավետ** սահմանադրական արդարադարպություն կարող է իրականացվել, եթք բոլոր սահմանադրական սուբյեկտներն իրավասու են դիմելու սահմանադրական դատարան եւ սահմանադրական բոլոր սուբյեկտների կողմից ընդունված նորմափիվ իրավական ակտերը կարող են դառնալ սահմանադրական արդարադարպության օբյեկտ: Բացի դրանից, քանի որ սահմանադրական արդարադարպության հիմնական բովանդակությունը Սահմանադրության գերակայության ապահովումն է, ապա այդ խնդիրը կմնա անլուծելի, եթե սահմանադրական դատարանը չերաշխավորի մարդու սահմանադրական արդարադարպության իրավունքի արդյունավետ իրականացման ճանապարհով նրա սահմանադրական իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ու ապահովումը, ինչպես նաև զուծի սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերը:

Պետքական իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծման իրավասություն ունեն սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգ ունեցող ավելի քան հիսուն երկրների սահմանադրական դատարաններ: Մասնավորապես, դես. Աղբբեջանի Սահմանադրություն, հոդվ. 130, Բուլղարիա՝ 149, Վրաստան՝ 89, Գերմանիա՝ 93, Իտալիա՝ 134, Լեհաստան՝ 189, Ռուսաստան՝ 125, Ալովակիա՝ 126, Ալովենիա՝ 160, Խաղանիա՝ 161, Տաջիկաստան՝ 89 եւ այլն:

² Առանձին երկրներում, օր., ԱՄՆ-ում, նշանակումը կատարվում է ցմահ:

Բացի դրանից, Սահմանադրության վերացական կամ, այսպես կոչված, բացարձակ մեկնաբանման իրավասություն ունեն 29 երկրների սահմանադրական արդարադափության մարմիններ, այդ թվում՝ Ադրբեջանում, Բուլղարիայում, Գարոնում, Գերմանիայում, Հունգարիայում, Ղազախստանում, Ղրղզականում, Մոլդովայում, Ռուսաստանում, Նամիբիայում, Սլովակիայում, Ուգրեկաստանում եւ այլն: Կցանկանայինք առանձնահափուկ կարեւորել, որ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանման անհրաժեշտությունն առավել մեծ է այն երկրներում, որտեղ նախագետաված է սահմանադրական փոփոխությունների առավել դժվարին ընթացակարգ, իսկ օրենսդրական պրակտիկայում բացակայում է օրգանական կամ սահմանադրական օրենքների ինսպիրուտը: Նման պայմաններում Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունը դադարական պրակտիկայի կողմից դառնում է երկրում սահմանադրական զարգացումների ամենաարդյունավետ ճանապարհը: Դրա ներուժի լիարժեք չօգտագործումը սահմանադրական ճգնաժամերի պարճառ կարող է դառնալ:

Սահմանադրությունը չի կարող մնալ ցանկությունների արձանագրման մակարդակում, այլ պեսք է երաշխավորի ու ապահովի դրանում ամրագրված նպատակների ու սկզբունքների իրացումը: Գլխավոր հարցն այն է, թե ինչպե՞ս հասնել դրան, ինչպե՞ս երաշխավորել, որպեսզի Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն՝ արդացողելով նաեւ հասարակական զարգացումների հիմնական միգրումները: Վյո հարցերի պարապիսանը մեծապես պայմանավորված է սահմանադրական հիմնական սկզբունքների ու կոնկրետ նորմերի պաշտոնական մեկնաբանման եւ Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանության մեխանիզմների առկայությամբ:

Ամերիկյան սահմանադրական մշակույթի բնորոշ գծերից մեկը հենց այն է, որ մեծ դեր վերապահվեց դադարական իշխանությանը Սահմանադրության մեկնաբանման հարցում: Դադարանի մենաշնորհն է ոչ միայն ասելու, թե ի՞նչ է Սահմանադրությունը գործնականում, այլև ինչպե՞ս պեսք է այն ընկալվի: Սահմանադրության էության մասին նման հիմնադրույթը կառուցված է հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման ընթացքում դրա իմաստի փաստարկման վրա: Սա է պարմականորեն արդարացված ճանապարհը Սահմանադրության ինքնաբավությունը երաշխավորելու համար:

Դադարական անցյալ դարի ընթացքում առավել կարեւորվեց նաեւ սահմանադրական էվոլյուցիոն կոնկրետ մեկնաբանման ինսպիրուտը: Վերջինս հնարավորություն է փալիս Դիմնական օրենքին հաղորդել առավել մեծ ձկունություն, հասարակական դինամիզմ, էապես նվազեցնել դրանում փոփոխություններ կադարելու գայթակղությունը: ԱՄՆ սահմանադրագերների կարծիքով՝ այս երկրի Սահմանադրության կենսունակությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Գերագույն դադարական ավելի քան 215

փարիների ընթացքում շուրջ 540 հավոր կազմող իր որոշումներում ներկայացված իրավական դիրքորոշումների ու մեկնաբանությունների միջոցով շարունակաբար թարմ լիցք է հաղորդել Հիմնական օրենքին: Կցանկանայինք հավելապես մեջքերել արոֆ. Դիկ Շովարդի եզրահանգումն այն մասին, որ «Գաղափարները՝ շարադրված ԱՄՆ Գերագույն դադարանի նախագահ Զոն Մարշալի կողմից «Մերքերին ընդդեմ Մեղիսոնի» դադարան գործի առնչությամբ, դարձան սահմանադրականության վարքեր աշխարհի փարբեր մասերում: **Լիովին կարելի է հասփառել, որ դա հանդիսացավ ամերիկյան ամենամեծ ներդրումը սահմանադրականության մեջ»** (ընդգծումը մերն է - Գ.Դ.):

Ամերիկյան սահմանադրական միգրը միարժեքորեն հավասպում է, որ Սահմանադրության արդարադարպական մեկնաբանման հնարավորությունն է Հիմնական օրենքին հաղորդում դինամիկ կայունություն ու ցթուլացող գործունակություն:

Վերջին փասնամյակների եվրոպական զարգացումները նույնական վկայում են, որ սահմանադրությունների մեկնաբանման հարցում բացառիկ կարեւորվում է սահմանադրական դադարանների դերը, որոնց իրավական դիրքորոշումները մայրցամաքային իրավական համակարգում սահմանադրական իրավունքի կարեւորագույն աղբյուր են դառնում: Այս թեմային նվիրված բազմաթիվ միջազգային քննարկումների ժամանակ՝ նպարակ ունենալով բացահայտել սահմանադրական դադարանների դերը Սահմանադրության կայունության ու զարգացման գործում, հապուկ կարեւորվում է Սահմանադրության վերացական ու կոնկրետ-անուղղակի մեկնաբանությունների բացառիկ դերն իրավական պետության կայացման ու զարգացման գործում: Ընդ որում, համոգումն այն է, որ աշխարհում գործող բոլոր սահմանադրական դադարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինսպիրատուրները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը:

Բազմաթիվ երկրներում (Լեհաստան, Սլովակիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Լիբիա, Սլովենիա, Վերբեցան եւ այլն) այլ նորմափիվ ակդերի ոչ միայն Սահմանադրությանը, այլեւ օրենքներին (հաճախ նաև միջազգային պայմանագրերին) համապատասխանության հարցը նույնական լուծում է սահմանադրական դադարանը եւ արդյունավետ չի համարվում այդ նպարակով նոր մարմիններ ստեղծելը (նման գեսակերը պաշտպանվում է նաև Վենեգիկի հանձնաժողովի փորձագետների կողմից):

Քաղաքացիների անհապական դիմումների հիման վրա նորմափիվ ակդի սահմանադրական վերահսկողություն է իրականացվում 53 երկրում, այդ թվում սահմանադրական դադարաններ ունեցող Արեւմբյան ու Արեւելյան Եվրոպայի բոլոր երկրներում: Նախկին խորհրդային երկրներից Հայաստանն այդ հարցը մասնակիորեն լու-

Եեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ Եվրախորհրդին անդամակցելու պարփակորությունների շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, վեդական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարփակորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) լուծում է հանրաքվեների արդյունքների հետ կապված վեճերը.

3.1) լուծում է Հանրապետության Նախագահի եւ պատգամավորների ընդունությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

4) անհաղթահարելի կամ վերացած է ճանաչում Հանրապետության Նախագահի թեկնածուի համար առաջացած խոշոնդովները.

5) եզրակացություն է բարձրացնելու Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

6) եզրակացություն է բարձրացնելու Հանրապետության Նախագահի՝ իր լիազորությունների կարգարման անհնարինության մասին.

7) եզրակացություն է բարձրացնելու դադարեցնելու, նրան կալանավորելու, որպես մեղադրյալ ներզրավելու, ինչպես նաև նրա նկարմամբ դարպական կարգով վարչական պարփասխանափակության ենթարկելու հարց հարուցելու վերաբերյալ.

8) եզրակացություն է բարձրացնելու համայնքի դեկանական պաշտոնանկ անելու հիմքերի մասին.

9) օրենքով նախագրեսաված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների հարցում միջազգային պրակտիկայում ընդունված է այն սկզբունքային մոփեցումը, որ դրանք պետք է ապահովեն դատարանի սահմանադրական վերահսկողության լիազորությունների ամբողջական եւ արդյունավետ կարգումը:

Ներկայումս, համաձայն ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել՝

- 1) Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ և 9-րդ կետերով նախագետաված դեպքերում.
- 2) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ և 9-րդ կետերով նախագետաված դեպքերում.
- 3) պարզամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերով նախագետաված դեպքերում.
- 4) կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ և 9-րդ կետերով նախագետաված դեպքերում.
- 5) քեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախող պետական մարմինների՝ նորմափիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.
- 6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դադարանի վերջնական ակտը, սպառվել են դադարական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկարմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.
- 7) դադարանները եւ գլխավոր դադարականը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմափիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.
- 8) մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմափիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.
- 9) Հանրապետության Նախագահի եւ պարզամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ և 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դադարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 102 հոդվածով սահմանվում է, որ Սահմանադրական դադարանն ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ Սահմանադրությամբ եւ սահմանադրական դադարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով:

Սահմանադրական դադարանի որոշումները եւ եզրակացությունները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում իրապարակման պահից:

Սահմանադրական դադարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմափիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

Սահմանադրական դադարանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ և 9-րդ կետերով նախագետաված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ

կեդրով նախագետաված հարցերով՝ եզրակացություններ: Եթե սահմանադրական դադարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից:

Սահմանադրական դադարանի կողմից իր որոշումներն ուժի մեջ մփնելու ժամկեդ սահմանելու քայլին գնացին մի շարք երկրներ, քանի որ փարբեր գործերով դադարանի որոշումների անմիջական ուժի մեջ մփնելը կարող էր առաջ բերել ածանցյալ լուրջ ոչ սահմանադրական հետեւանքներ: Օրինակ, նման իրավասություն ունի Գերմանիայի սահմանադրական դադարանը, որը կոնկրետացված է դադարանի մասին սահմանադրական օրենքի 31 և 79 պարագրաֆներում:

«Այսպահանում այս հարցը հսկակ կանոնակարգված է «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքով:

Կարեւոր են նաև սահմանադրական դադարանի որոշումների իրավական բնույթի, բովանդակության եւ կարարման ապահովման խնդիրները: Սահմանադրական արդարադարձության միջազգային պրակտիկայի եւ սահմանադրագիրության կողմից արձանագրված իրողություն է, որ սահմանադրական դադարանի որոշումները **նախադեպային բնույթ ունեն եւ հանդիսանում են իրավունքի կարեւոր աղբյուր**: Միջազգային պրակտիկան վկայում է նաև, որ սահմանադրական դադարանի որոշումները չեն կարող դառնալ **պետական պաշտոնյաների քննարկման ու մեկնաբանությունների առարկա**: Նման փասթերը վկայում են սահմանադրական մշակույթի ցածր մակարդակի, իշխանությունների դադարանցագրման սկզբունքի անհետեւողական իրացման մասին: